ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2979 - Ա **20 ապրիլի 2009թ.**

ՄԵԾԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ Հ. 48 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՀԱՆ ՄԻՆԱՍԻ ՍԱՐՄԱԶՅԱՆԻ, ԿԻՄԱ ՄՈՎՍԵՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ԿԱՐՊԻՍԻ ՍԱՐՄԱԶՅԱՆԻ, ԿԱՐԻՆԵ ԿԱՐՊԻՍԻ ՍԱՐՄԱԶՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ԿԱՐՊԻՍԻ ՍԱՐՄԱԶՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վահան Մինասի Սարմազյանի (ծնված 01.07.1934թ.), Կիմա Մովսեսի Ավետիսյանի (ծնված 21.03.1955թ.), Կարեն Կարպիսի Սարմազյանի (ծնված 04.11.1974թ.), Կարինե Կարպիսի Սարմազյանի (ծնված 04.11.1974թ.), Հասմիկ Կարպիսի Սարմազյանի (ծնված 30.06.1976թ.) դիմումը: Տեղազրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Մեծարենցի փողոցի հ.48 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 626.3քմ, որից 328.9քմ մակերեսով հողամասը Վահան Մինասի Սարմազյանին, Կիմա Մովսեսի Ավետիսյանին, Կարեն Կարպիսի Սարմազյանին, Կարինե Կարպիսի Սարմազյանին, Հասմիկ Կարպիսի Սարմազյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 297.4քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 17.09.2008թ. ժառանգության իրավունքի վկայագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 19.09.2008թ. հ.2044, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 10.03.2009թ. հ.20/2-Ե/222 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 06.04.2009թ. հ.2766 եզրակացությունը, համաձայն որի Մեծարենցի փողոցի հ.48 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Մեծարենցի փողոցի հ.48 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վահան Մինասի Սարմազյանի, Կիմա Մովսեսի Ավետիսյանի, Կարեն Կարպիսի

Սարմազյանի, Կարինե Կարպիսի Սարմազյանի, Հասմիկ Կարպիսի Սարմազյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 328.9քմ մակերեսով հողամասին կից 297.4քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 297.4քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Մեծարենցի փողոցի հ.48 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Մեծարենցի փողոցի հ.48 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Վահան Մինասի Սարմազյանի, Կիմա Մովսեսի Ավետիսյանի, Կարեն Կարպիսի Սարմազյանի, Կարինե Կարպիսի Սարմազյանի, Հասմիկ Կարպիսի Սարմազյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ